Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն 2

ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի կարիքների համար «ՀՀ ՇՄԱ ԷԱՃԱՊՁԲ-2027/02» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով ռեգուլյար բենզինի ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

06.11.2026 թվական **ք. Գյումրի**

Օրակարգ - «ՀՀ ՇՄԱ ԷԱՃԱՊՁԲ-2027/02» ծածկագրով մրցույթի հրավերում կատարված փոփոխության վերաբերյալ

/Զեկուցող Ա. Ալեքսանյան/

05.11.2026 թվականի Պետական վերահսկողական ծառայության թիվ /1712-26 գրությամբ ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմ է ներկայացվել առարկություն ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի կարիքների համար «ՀՀ ՇՄԱ ԷԱՃԱՊՁԲ-2027/02» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով ռեգուլյար բենզինի ձեռքբերման բնութագրի վերաբերյալ:

Մասնավորապես՝ Հրավերի տեխնիկական բնութագրի վերլուծությամբ պարզվել է, որ մատակարարվելիք վառելիքի բնութագրում հղում է կատարվել ՀՀ կառավարության 2004 թվականի նոյեմբերի 11-ի N 1592-Ն որոշմամբ հաստատված «Ներքին այրման շարժիչային վառելիքների տեխնիկական կանոնակարգ»-ին, որն ուժը կորցրած է ճանաչվել ՀՀ կառավարության 2022 թվականի հունվարի 13-ի N 27-Ն որոշմամբ:

Հիմք ընդունելով Պետական վերահսկողական ծառայության դիտարկումը, պատասխանատու ստորաբաժանման կողմից հրավերի բնութագրում կատարվել է համապատասխան փոփոխություն:

Գնահատող հանձնաժողովը գնահատեց՝

ա) բնութագրում կատարված փոփոխությունը

Որոշվեց:

1. « ՀՀ ՇՄԱ ԷԱՃԱՊՁԲ-2027/02» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերում կատարել համապատասխան փոփոխություն և մրցույթի փոփոխությունը հրապարակել ՀՀ ֆինանսների նախարարության e-AUCTION համակարգում:

2. Որոշվեց գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի օր և ժամ սահմանել 2026 թվականի նոյեմբերի 18-ը ժամը 12.30-ը:

Հանձնաժողովի նախագահ՝ Աստղիկ Ալեքսանյան

Անդամներ՝ Իրինա Ջանոյան

Անահիտ Հարությունյան

Համակարգող քարտուղար՝ Զարիկ Մուրադյան